



# Ս. ՅԱԿՈԲԻ Ն Ե Ր Ս Է Ն

\* Շք. 1 Մայիս.— Գլխատումն Յովհաննու Կարապետին: Ս. Կոյսի Անետման տօնը զուգահեյպած ըլլալով Անագ Երեքշաբթի օրուան, կարելի չէր եղած իր օրին կատարել: Ուստի ալ առաւօտ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեանի, Միաբանութիւնը ինքնաշարժներով մեկնեցաւ Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուց Գերշ. Հանդիսապետ Սրբազանը:

\* Կիր. 2 Մայիս.— Նոր Կիրակի (Յիշատակ բիրաւոր նահատակացն մերոց լընթացս Ա. Համաշխարհային պատերազմին): Հստ սովորութեան, Մայր Տաճարի Անագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատուց Լուսահանը՝ Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գարիկեան և քարոզեց, նիւթ ունենալով Մեծ Եղեռնի մեր մէկուկէս միլիոն նահատակները: Ս. Պատարագէն ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ նահատակներու հոգիներուն համար, որմէ ետք կազմուեցաւ մեծ թափօր, զըլխաւորութեամբ Նորին Ամենապատուութեան և մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան և ուսանողութեան, և առաջնորդութեամբ քաղաքիս բոլոր Հայ Միութիւններու արիւններուն և արեւնոյշներուն: Թափօրը, լամբաքաղ ու հանգստեան շարականներու երգեցողութեամբ, ուղղուեցաւ դէպի Ս. Փրկչի ազգային գերեզմանատունը և բոլորուեցաւ Արարայի Նահատակներու Յուշարձանին շուրջ, որուն պատուանդանին գետնէդուեցան ծաղկեպսակներ: Հանգստեան պաշտամունքէն ետք, խոտն քազմութեան մէջէն խօսք առաւ զաղոյթիս ծանօթ ազգայիններէն Պր. Վարդան Տէր Վարդանեան, որ բովանդակալից կերպով պարզեց ծայրերը Մեծ Եղեռնին և լուսադրեց ներկաները հայրենիքի պայծառ իրականութեամբ:

\* Շք. 8 Մայիս.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատուոն մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պալլամեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Աշխարհամատրան Կիրակիի առթիւ, Գերշ. Տ. Ծափէ Արքեպս. Աճեմեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը վերնատան մեր մատուոն մէջ: Ապա կատարուեցաւ Տօօրհանական սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Ղարիպեան: